600.0359.30.08.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2017 թվականի №359Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №103Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով 2016 թվականի դեկտեմբերի 20-ին «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության և «Մայնի Ֆրանկֆուրտի Կրեդիտանշտալտ Ֆյուր Վիդերաուֆբաու» կազմակերպության միջև կնքված համաձայնագրի 1-ին գլխի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադի (Որոտան) Հիդրոէլեկտրակայանների վերազինում» ծրագրի շրջանակում իրականացվող ներդրումների մասին» №103Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով.

«1.1 Սահմանել, որ՝

1) սույն որոշմամբ հաստատված «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադի (Որոտան) Հիդրոէլեկտրակայանների վերազինում» ծրագրի իրականացմանն ուղղված ներդրումների շրջանակում, վերջինիս սեփական միջոցների հաշվին իրականացրած ներդրումների ոչ ավելի, քան 5 000 000 (հինգ միլիոն) եվրո գումարի չափով վերադարձը կապահովվի ընկերության շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում ներառելու միջոցով.

2) սույն կետում նշված ներդրումների արդյունքում ստեղծված ակտիվների՝

ա. մաշվածությունը կհաշվարկվի գծային եղանակով և կկիրառվի տարեկան 12 տոկոս մաշվածության նորմա,

բ. մնացորդային արժեքի նկատմամբ յուրաքանչյուր տարի կկիրառվի 10 տոկոս շահույթի նորմա՝ մինչև հարկումը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
30 օգոստոսի 2017թ.
ժամը 16[00]